ՏԵՍԻԼ.

Առաւօտեան արշալուսին
Մինչ դէմքի, չգիտեմ ուր,
Բռնադատեց ինձ մի ծերիկ
Դէպ մի պարտէզ հոտաբոյր,
Ուր բիւրաւոր գոյներ ծաղկանց
Ցիշել տուին ինձ կեանք անանց.
Բայց և նոցա անոյշ հոտով
Իսպառ եղէ ես զմայլած,
Ուրախութեամբ սիրտս թնդաց,
Միտքս դիպաւ պէսպէս յուզմանց,
Երբ ծերիկն անակնկալ,
Ինձ բերկրութեան դուռն երաց.
Քաղեց ծաղկունք, կապեց ի փունջ,
Առաջարկեց ինձ զուարթադէմ,
Թէպէտ լռիկ և անշշունչ,
Բայց երևիւր խորհրդաւէմ.
Միտք ծերունւոյն շատ անյապաղ
Եղև իսկոյն ինձ զգալի,
Ա՛յն է—հետևիլ անդանդաղ,
Ուր նա ինքն դիմել կամի.
Տիրաւուրախ կարապետիս
Մինչ հետևէի միամիտ,
Ցանկարծ մի ձայն ասաց սրտիս,
Թէ" Մի՛ պարծիր և դու անմիտ".
Պտտելով այս պարտիզում,
Հանդիպեցաք ճոխ գահերի,
Որք զարդարված շատ անկիւնում,
Կսպասէին նստողների.
Ո՞ւր են արդեօք այս փառքերի
Ժառանգները, ո՛վ ծեր բարի,
Մեծ զարմանքով տխուր ծերին
Ես պարզօրէն շոշ հարցրի.
Կանգնեց ծերը հանդարտօրէն,
Ցոլոց հանեց խիստ դառնօրէն,
Ձեռը պարկեց գահը դէպի,
Ասաց" և դու նստի՛ր, որդի."
Երբ ես նստայ գահի վերայ,
Սիրտս լցաւ զուարճութեամբ,
Կարծէի թէ անմահացայ
Մի անպատում երջանկութեամբ

"Նայի՛ր, որդի, ծերը ասաց,
Այս պարտիզի գեղեցկութեան,
Կարծես թէ մի վիճակ անանց
Նուիրվածէ սա մարդկութեան".
"Զուարճացի՛ր, որքան կարես,
Պայծառութեամբ այս պարտիզիս,
Զի վաղ արդէն մեր առաջև
Կպարզվի մի լայն ասպարէզ."
"Անդ կտեսնես հանդիսարան
Քաղցր ու դառն տեսարան,
Եւ այս փառքի ժառանգներին
Անդ պատրաստած գաղտնի դարան".
Սակայն իսպառ ես զմայլված
Պէսպէս հոտով սիրուն ծաղկանց,
Զզգայի ես մի այլ վիճակ,
Քան զայն վսեմ ու գերազանց.
Ծերիկն ասաց "Բաւ է որդի,
Արի՛ գահէդ վաղվաղակի,
Ինձ հետևի՛, ուր ես գնամ,
Մո՛ւտ այն դռնով, որ կբանամ".
Իմ ծերիկը երբ մօտեցաւ
Շրջապատին բարձրադիտակ,
Կարծես դուռն ինքնին բացաւ,
Որ երևումէր ամրափակ.
Երբ ներս մտի, ո՛հ, ի՞նչ տեսի, —
Մի ընդարձակ ասպարիզում
Անթիւ մանկտի մարդկան սեռի
Համեստ խաղերով պարապվում.
Միւս կողմումը պատսպարան,
Բաց դռներով և աննման,
Կախած ճակտին մի վերնագիր, —
Կարդացի ես " ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ",
Ուր լռութիւն թագաւորած
Շուտով գրաւեց իմ հայեացք.
Բայց ինձ և մի յուսալի ձայն
Քաջալերեց տեսանել զայն.
Տեսակ տեսակ մանուկներով
Տեսի միջում դասաւորված,
Որոնք և համեստ ջանքերով
Ուր անխոնջ էին զբաղված.
Ասա մի հոյակապ շինութիւն
Դարձեալ ունէր մի վերնագիր—

"ԱՐՀԵՍՏԱՆՈՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ"

Ոսկեզօծած գեղեցկագիր,
Որպէս փայլուն իւր մակարդակ
Գրաւումէր արդէն մեր հայեացք
Ներքին դրութեամբ և նոյնդունակ,
Փողփողում էին մէքենայք։
Որով կարծես գուշակվում էր
Թէ մի Ազգի բազդ ու վիճակ
Դորա մէջը կաշկանդված էր,
Պսակելու իւր նպատակ։
Այս լայն դաշտի և միւս կողմում
Ներկում էին քաջ մշակներ.
Առատապէս և սերմանում
Ցանումէին զարարտ սերմեր։
Թաւշանման մարգագետին
Ցանկարծ բացաւ մեր առաջին.
Ուր և հոսանք պարզ վտակաց
Իմ սիրտ և ուշ գրաւեցին։
Փոքր անցած նկատեցինք
Հովիւներուն և հօտերուն,
Ոմանց նիրհով քնած տեսինք,
Ոմանց արի, հսկող, արթուն։
Աստ մի յոգոց ծերը հանեց,
Փոքր ինչ խոնջ տալով ոտից,
Եւ գէպի ինձ ձեռը պարզած,
Ո՛հ, ապուշ միտքս կազդուրեց.
Եւ եթերից արեգական
Ոսկեզօծող ճառագայթով,
Մինչ փայլումէր հովիտն այն,
Ցանկարծ տխրեց աղօտ լուսով։
Քանի մի քայլ դեռ չփոխած,
Մեր առաջև դետ մի բացաւ,
Մինչ նայում էին զարմացած,
Տեսի ծերին միւս կողմն անցած։
Դե՛հ, իմ որդեակ, դե՛հ, ընթացի՛ր,
Քանի պարզէ, և դու անցի՛ր,
Աստ փոքր մի առնունք հանգիստ,
Չի այս ուղին դժուար է խիստ"։
Այս ասելով ծերը նստաւ,
Գետի ափում տնքտնքալով,
Ուր և մի թառաչ հանելով,
Գլորեց արտասուք իւր աչքից։

Շարժեց գլուխը տխրագին,
"Դու դե՛տ թշուառ, ասելով,
Որքան արիւն թանկագին,
Անյայտ արիր քո հոսանքով"։
"Որքան աչքեր ծնողական
Աղի ջրով կուրացուցեր,
Եւ որքան մարմին պատուական
Քո սուր հոսանքով կորուսեր"։
"Գե՛տ դու, գոնէ քո Արարչից
Զվախեցա՞ր, անագորոյն,
Մի՞թէ չար անխիղճ մարդկանցից
Ուսար այդպէս ընութիւն"։
"Արի, արի անբաղդ որդիս,
Շարունակենք մեր այս ուղին,
Որքան նստենք, ցաւէ սրտիս,
Չէ՛ սփոփելու և իմ հոգին . . . .
Բարձրացաւ դէպի շուտով
Կարծես ստորոտ մի սև սարի.
Քաջալերեց և ինձ փութով,
Լինիլ զգաստ, ժիր, և արի։
Մինչդեռ և ես անհանգիստ
Այս Ստիւքսեան ճանապարհ
Կընթանայի վշտացած,
Մի ընդարձակ դաշտ ու հովիտ
Մեր առաջև տեսի բացված։
Կարծես այստեղ մի յոյս Վերին
Պիտի հասնէր մեր թիկունքին,
Եւ սփոփէր սրբելով
Արտասուքն աչքից իմ ծերին։
Բայց բազմութիւն արանց կանանց
Ուր իմ հայեացք գրաւեցին,
Աստ մի վիճակ թշուառ մարդկանց
Իմ ուշ ու միտքս խլեցին։
Ո՞հ, ինչ եմ տեսնում, բարի՛ ծեր,
Թշուառ, անտէր, որբ մանուկներ,
Դոքա մի՞թէ չունին այստեղ
և տուն, և հարազատ հայրեր։
Դեռ արևը հորիզոնում
Փայլ էր տալիս ամպերին,
Լուսինը սիրուն հասակում
Այց էր եկել աշխարհին։
Կարծես թէ նա կարօտապէս,
Դէպ իւր եղբայրը ուսատու

Ընթանում էր արագապէս
Սրտի փափագն առնելու.
Երբ որ գոքա եղբայրական
Բարև համբոյր տուին միմեանց,
Հուսով հապա հրաժարական
Ասաց արևն, էլ չերևաց.
Մինչդեռ լուսինը լողում էր
Պարզ երկնակամարի վերայ,
Մինչդեռ վառ անթիւ աստեղներ
Խաղում էին շուրջը նորա,
Բացեց բերանը իմ ծերը,
Մի ծանր յոգւոց հանելով,
Պատմեց հանդարտ իւր վշտերը.
Իւր խոստովանք ասելով.
"Լսի՛ր, իմ հարազա՛տ որդեակ,
Ցիշէ՛ր փառքն ու այն պարտէզ.
Որոնց տէրերն անանկ տնանկ
Կրումեն այստեղ ցաւեր պէսպէս".
"Դոցա որդիք մերկ ու բոբիկ
Անտէր, անճար, թափառելով,
Որոնում են գթած մարդիկ,
Ողորմութեան կարօտելով".
"Կա՞ն արդեօք մարդիկ ողորմած,
Որ իւրեանց տուրք ողորմութիւն
Միայն գիտենայ ինքն, Աստուած,
և նա, որ ունի կարօտութիւն".
"Կա՞ն արդեօք գթած իշխաններ,
Որոնց դատը լինի անաչառ.
Զի խեղճ այրին իւր գանգատներ
Կամի վճռել օրէնքով արդար".
"Կա՞ն արդեօք բարի մշակներ,
Որք չունենային չար սերմեր,
Կամ նոցա ագարակի մէջ
Գէ՛թ չ'գտանվէր որոմներ".
"Կամ քաղցր արթուն հովիւներ
Մխիթարված իւրեանց հօտերով՝
Կամ փոխադարձ յարմարութեամբ
Կապված լինէին սուրբ սիրով".
"Ու վաճառակա՛ն բարեխառն,
Ստանալով արդար վաստակ,
Չ'շեղէին չափն ու կշիռն
Ունելով բարի նպատակ".
"Կա՞ն և ճշմարիտ եղբայրներ,
Որոնց սիրտն ու լեզուն համաձայն,
Գործ կատարէին շահաբեր,
տեղիք չ'տալով կրքին ունայն".
Ես գրաւած ծերի խօսքերով,
Ննջում եմ շատ քաղցր քնով,
Որից սթափուած տեսանում եմ,
Ծե՛ր չկայ, այլ երազում եղել եմ։

Յովհաննէս Մէլիքբէգեանց։

ի Շամախի.

ՄԱՐԳԱՐԷՆ ՅՈՎՆԱՆ

Զի՞նչ մրրիկ նորահրաշ Միջերկրական ի ծովի,
Զի՞նչ ահաւոր և զայրագին գոչւն ալեաց
սոսկալի.
Նաւ մի յալիս ծփայ ծփայ գայ և գնայ տարաձիգ.
Ցերկնից մաղթէ զայցելութիւն նաւավարաց
ձայն սաստիկ.
Փախչի Յովնան, ո՜հ յերեսաց ամենակալ Արարչին,
Ցոր տէրութիւն ամենազօր վայրք ամենայն պա-
րուրին.
Եւ ոչ երթայ դէպ ի Նինուէ առ ի քարոզ ընակ-
չաց,
Զզջալ զմեղս և զերծանիլ ի կործանման վտան-
գաց.
Թէ ոչ գնայցես, երկմիտ Յովնան, լինել քարոզ
քաղաքին,
Ուրեմն ի ծով անդր ընկղմեալ աւանդ լիցիս
մեծ Կիտին.
Տեսանիցես զզօրութիւն սքանչելեաց Արարչին,
Գոլ օրինակ նորոցս զարդիս թաղման որդւոյն
Միածնին.
Զի նաւաստիք աղդմամբ վերնոյն գող հրաշալից
ի վիճակ,
Գտին զպարտեալն, առեալ արկին ծովուն խռո-
վեալ ի յատակ.
Այլ Մարգարէն յետ երրակի լուսոյն պայծառ
արեգին,
Ել ի ցամաք ձեռամբ հաստչին յարովայնէ ի
կետին.